վանքի սուրբ ուխտը՝ լինելու առաջնորդ: Այնտեղ նա մնաց երկու տարի:

Օսմանցիների թագավոր Մուրադը եկավ, գրավեց Երևանի բերդը, իսկ Երևանի ողջ երկիրը ցրվեց, ուր որ կարողացան գնալ, գնացին: Այդպես էլ Հովհաննես եպիսկոպոսը դուրս եկավ Օհանավանքից իր աշակերտներով գնաց Աղվանից աշխարհը՝ Գառնակերի վանքը[132]:

Նույն տարի ձմեռը Շահ Սաֆի պարսից թագավորը եկավ և հետ առավ Երևանի բերդը, իսկ նրանք, որ ցրվել էին, բոլորը եկան իրենց տեղերը: Եկավ նաև Հովհաննես եպիսկոպոսը իր տունը՝ Օհանավանք և տեսավ ամայի: Հավաքեց բազմաթիվ միաբաններ և ուղղեց վանքերի կարգը և մեկին վերակացու նշանակեց վանքերին, իսկ ինքն առնելով իր աշակերտներից չորսին՝ գնաց Ծաղկաձորի[133] գավառը վանքի համար ցորեն հավաքելու: Աշակերտներին պատվիրեց իր մասին ոչինչ չասել, թե ով է: Նրա հետ էր մենակյաց Հակոբ անունով խելքից պակաս մի կարբեցի: Խելքի պակասության պատճառով բոլորը ճանաչում էին նրան, ծաղրում ու ծիծաղում էին նրա վրա և կոչում էին Գիժ Հակոբ: Եպիսկոպոսը ինչ-որ ժողովում էր, Գիժ Հակոբը երկու էշով տանում էր վանքը և հետ դառնում: Ուր էլ լիներ եպիսկոպոսը, գնում, գտնում էր: Ըստ սովորության Գիժ Հակոբը գնաց վանք, իսկ եպիսկոպոսը գնալով հասավ Նախամարք գյուղը[134]: Այնտեղ երկու երեցներ կային, մեկը Կեչառիսից[135], իսկ մյուսը՝ նույն Նախամարք գյուղից: Նրանց անունները Սահակ էր: Եպիսկոպոսը գնաց այնտեղ, նրանց ողջույն տվեց: Նրանք նրան տեսան աղքատ հագուստով, հետիոտն, նաև կաղ, նրան չպատվեցին, այլ նստեցրին մորթու վրա, իսկ իրենք սկսեցին խոսել Աստվածաշնչից վայրիվերո ու սուտ: Նախատեցին նրան ու ասացին՝ դու միայնակյաց ու մուրացիկ մարդ ես, դու ո՞վ ես, որ մեր խոսքերին չես հավանում, լուռ կաց: Նա այլևս չխոսեց: Մինչդեռ նրանք խոսում էին, ահա եկավ Գիժ Հակոբը և ներս մտավ: Քահանաները նրան տեսան և ողջունեցին. կատակով ասացին՝ բարով եկար մուղդուսի: Հակոբը նայեց, տեսավ եպիսկոպոսին այնպես չհարգված: Եվ ըստ իր ոճի ասաց քահանաներին. «Հո՛, հո՛, գիտե՞ք, թե ով է սա»: Եպիսկոպոսը սաստում էր նրան՝ չխոսել: Քահանաները ծաղրանքով ասում են՝ ո՞վ է այդ,

չենք ճանաչում: Հակոբն ասում է՝ դա այն կարբեցի պարոն տեր Հովհաննեսն է, որ Լիմ անապատում յոթ տարի կռվել է դևերի դեմ: Քանզի քահանաները լսել էին համբավը, այդ պատճառով ամոթահար եղան, խիստ ամաչեցին, ընկնելով նրա ոտքերը թողություն խնդրեցին և ըստ արժանվույն պատվեցին նրան: Հետևյալ օրն ընկան նրա առջևը, շրջեցին այդ երկիրը ու մեծ քանակությամբ ցորեն հավաքեցին և իրենց գրաստով ուղարկեցին վանքը:

Երկու տարի հետո իր կամքով հրաժարվեց վանքից, գնաց Սաղմոսավանքի[136] անապատը և նորոգեց այն, ամեն կարգուկանոն հաստատեց: Այնտեղ հավաքվեցին ավելի քան քառասուն միաբաններ: Իսկ Հակոբ կաթողիկոսը նրան հանձնեց Սաղմոսավանքի առաջնորդությունը, որպեսզի անապատին ու վանքին տիրություն անի:

Նիգ գավառը Սաղմոսավանքի իշխանությանն էր ենթարկվում: Այնտեղ կար մի գավառապետ քահանա, որին կոչում էին Մելիք տեր Հովասափ: Հովհաննես եպիսկոպոսը խրատում էր նրան և ասում էր՝ ծերացել ես, ինչքան որ մարմնական իշխանություն ես արել, քեզ բավական է, այժմ այդ թող քո որդիներին, իսկ դու հրաժարվիր, եկ անապատ, ապրեցրու քո հոգին: Շատ անգամ էր խրատում նրան: Իսկ այդ անխիղճը փոխանակ լսելու և անելու, չարիքներ ավելացրեց իր արած չարիքների վրա: Գնաց նրան մատնեց խանի առջև. ասաց՝ մի սևագլուխ անիծում է ինձ, իսկ քեզ հայհոյում է, թե ինչու է քեզ մելիք դարձրել և շատ չարախոսություններ արեց: Խանը բարկացավ ու զինվորներ ուղարկեց, եպիսկոպոսին տարան խանի առջև: Խանը հարցրեց՝ դո՞ւ ես Հովհաննես եպիսկոպոսը: Պատասխանեց՝ այո, ես եմ: Խանը հարցրեց՝ ի՞նչ վնաս տվեց քեզ մելիքը, որ անիծում ես նրան ու հանդիմանում, ինձ էլ հայհոյում ես: Եպիսկոպոսը ասում է՝ ես Տիրոջից հրաման չունեմ որևէ մեկի անիծելու կամ հայհոյելու: Իսկ նրանք, որոնք անկարգ են, նրանց ենք խրատում ըստ մեր օրենքի: Եթե լսում է, լավ է, եթե՝ ոչ, իր արյունը իր գլուխը թող լինի: Նույնպիսի խրատ տվի մելիքին, իսկ եթե չի լսում, ինքը իրեն թող պարտական մնա: Իսկ մենք պարտավոր էինք ասելու: Խանն ասում է՝ դու նրան խրատեցիր, և նա քեզ չլսեց, մենք ի՞նչ չար բան էինք արել, որ մեզ հայհոյում ես: Եպիսկոպոսն ասում է՝ ես սովորություն չունեմ որևէ մեկին